ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՆԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Փիլիսոփայական ու տնտեսագիտական գրականության մեջ հաճախ է խոսվում օբյեկտիվ ու սուբյեկտիվ արտադրողական ուժերի և դրանց փոխհարաբերության մասին։ Մի շարք հեղինակներ արտադրողական ուժերի կառուցվածքում որոշիչ կողմը համարում են իրային տարրերը[1]։ Այս դրույթը հիմնավորվում է նրանով, որ նյութական արտադրության զարգացման բոլոր մակարդակներում մարդու աշխատանքի բնույթն ու նրա արտադրական ֆունկցիաները պայմանավորված են արտադրողական ուժերի իրային տարրերի և ամենից առաջ՝ աշխատանքի գործիքների զարգացման մակարդակով։ Հիշյալ հեղինակների կարծիքով, այսպիսի մոտեցման դեպքում, պահպանվում է նաև արտադրողական ուժերի իրային և անձնական տարրերի փոխհարաբերության և ամբողջությամբ վերցրած՝ հասարակական առաջադիմության բացատրության մարքսիստական ելակետային դրույթը։ Միաժամանակ, վերջին տարիներին գրականության մեջ ընդգծվում է, որ արտադրողական ուժերի գլխավոր տարրը մարդն է[2]։ Ի. Յաստրեմսկին կարծում է, որ վերը նշված երկու դրույթների միջև հակասություն կա։ «Մեր գրականության մեջ,— գրում է նա,— բոլորի կողմից ընդունված է, որ մարդը գլխավոր արտադրողական ուժն է։ Միաժամանակ կոնկրետ հետազոտությունների ընթացքում բոլորը միաձայն հաստատում են, որ արտադրողական ուժերի որոշիչ տարրը աշխատանքի գործիքները կամ աշխատանքի միջոցներն են և, այսպիսով, արտադրողական ուժերի կազմում մարդու գլխավոր դերի մասին դրույթը մնում է օդից կախված»[3]։ Այնուհետև, Ի. Յաստրեմսկին հանգում է այն եզրակացության, որ հատկապես գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում արտադրողական ուժերի իրային տարրերի նկատմամբ մարդն

---

[1] Б. Чагин, А. К. Белых, А. П. Машков, Материальное производство —основа существования и развития общества («Марксистско-ленинская философия», М., 1964, с. 316); Г. Е. Глезерман, Способ производства и его роль в развитии общества, М., 1957, с. 9—10; его же, Исторический материализм и развитие социалистического общества, М., 1973; М. Я. Ковальзон, Закономерности развития производительных сил и производственных отношений, М., 1957, с. 6; «Основы марксистско-ленинской философии», М., 1975, с. 251.

[2] В. Я. Ельмеев, Коммунизм и развитие человека как производительной силы общества, М., 1964, с. 7 и др.; И. П. Буян, Социально-экономические основы труда при социализме, Киев, 1973, с. 12; С. М. Милашин, Труд как источник развития общественного прогресса, Горький, 1975, с. 114—115; «Экономические проблемы научно-технической революции при социализме», М., 1975, с. 183—184.

[3] И. Н. Ястремский, О внутренней диалектике развития производительных сил («Некоторые вопросы исторического материализма», Ростов-на-Дону, 1962, с. 52).

ունի որոշիչ դեր[4]։ Այս պնդումը չի կարելի հիմնավորված համարել այն պատճառով, որ նրանում հակադրված ու շփոթված են քննվող հարցի միմյանց հետ կապված երկու տարբեր կողմերը։ Այն հարցը, թե արտադրողական ուժերի իրային և անձնական տարրերի միասնության մեջ ո՞ր կողմն է որոշիչը, ըստ էության օբյեկտիվի և սուբյեկտիվի հարաբերության հարցն է, որը սկզբունքորեն լուծված է պատմության մատերիալիստական ըմբռնման մարքսիստական ուսմունքում։ Մարդու՝ իբրև գլխավոր արտադրողական ուժի, ընդունման դեպքում հարցը դրվում է սուբյեկտիվ գործոնի ակտիվության, օբյեկտիվ պայմանների վրա ազդելու և դրանք վերափոխելու մարդու յուրահատուկ ու անկրկնելի կարողության տեսանկյունից։ Այստեղ պետք է որոշակիորեն տարբերակել երկու բան. արտադրողական ուժերի կառուցվածքում իրային տարրերի որոշիչ դերի դրույթն արտահայտում է հասարակական արտադրության մեջ նյութական պայմանների առաջնայնությունը։ Մարդու՝ իբրև գլխավոր արտադրողական ուժի, դրույթն արտահայտում է նյութական արտադրության մեջ սուբյեկտիվ գործոնի նախաձեռնող, ակտիվ, շարժիչ վերափոխիչ դերը։ Ի. Յաստրեմսկին անտեսում է այն իրողությունը, որ սուբյեկտիվ գործոնի ակտիվ դերը վերջին հաշվով պայմանավորված է օբյեկտիվ պայմաններով։ Սուբյեկտիվ պայմաններն անխզելիորեն կապված են օբյեկտիվի հետ, գրել է Վ. Ի. Լենինը[5]։ Ստեղծելով նյութական արտադրողական ուժերը, զարգացնելով տեխնիկան և դրանց օգտագործման տեխնոլոգիական ձևերն ու մեթոդները, մարդիկ միաժամանակ կախման մեջ են գտնվում արտադրության նյութական պայմաններից, որոնք իրենց հերթին որոշում են աշխատողի արտադրական ֆունկցիաներն ու դրանց իրացման ձևերը, վերջիններիս զարգացման աստիճանն ու արտադրական հնարավորությունները։ Այսպիսով, վերը բերված երկու դրույթների միջև հակասություն չկա։ Դրանք արտացոլում են արտադրողական ուժերի իրային և անձնական տարրերի զարգացման ներքին դիալեկտիկան։

Աշխատանքի կազմակերպման ամենապարզունակ ձևն էլ ենթադրում է նպատակաուղղված գործունեություն կամ մարդու աշխատանք, աշխատանքի առարկա, որին ուղղված է նրա գործունեությունը և աշխատանքի միջոցներ, որոնցով իրականացվում է աշխատանքը։ Նպատակաուղղված գործունեությունն իր հերթին ենթադրում է մարդու ֆիզիկական ու հոգևոր կարողությունների միասնություն և, ինչպես նշել է Կ. Մարքսը, հանդես է գալիս իբրև մարդու աշխատանքի ծախսում՝ առանձնահատուկ նպատակաուղղված ձևով[6]։ Այդ պրոցեսում մարդն իրականացնում է իրար հետ կապված և միմյանց փոխադարձաբար լրացնող մի շարք ֆունկցիաներ, որոնց միջոցով դրսևորվում է մարդու՝ իբրև գլխավոր արտադրողական ուժի ու արտադրության սուբյեկտիվ գործոնի, հատկությունը։ Այդ ֆունկցիաներն ընդհանուր ձևով կարելի է խմբավորել հետևյալ կերպ. 1. Մտավոր-տրամաբանական ֆունկցիա։ Այն ներառում է աշխատանքի նպատակադրումն ու պլանավորումը, աշխատանքի առարկաների, միջոցների, մեթոդների ու ձևերի ընտրությունը,

---

4 Նույն տեղում։

5 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 11, էջ 19։

6 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 53։

ինֆորմացիայի ընդունումն ու վերամշակումը, արտադրության պրոցեսի հետ կապված զանազան որոշումներ կայացնելը և այլն։ Անհրաժեշտությունն ու աճող պահանջմունքներն առաջադրում են աշխատանքային պրոցեսի շարժառիթն ու նպատակադրումը։ Շարժառիթն իբրև ճանաչված անհրաժեշտություն աշխատանքային գործունեության ամենաակտիվ, «ամենաանհանգիստ» տարրն է։ Այն իրականացվող աշխատանքի խթանն ու սկիզբն է, որին հաջորդում է աշխատանքի նպատակադրումը։ Վերջինս ապագայի յուրատեսակ նախագիծ է, գործունեության ուղեցույց, պահանջմունքի բավարարման ընդհանուր պլան։ Որպես այդպիսին, նպատակադրումը պարունակում է նախատեսվող աշխատանքի նախագծի որոշ տարրեր։ Սակայն ինքնին նպատակադրումը դեռևս աշխատանքի իդեալական պատկերացումը չէ։ Շարժառիթն ու նպատակադրումը միայն մղում, տրամադրում են տվյալ աշխատանքը կատարելու։ Ընդ որում, այստեղ կարևոր է այս կամ այն առարկայի հասարակական անհրաժեշտության գիտակցումը։ Վերջինս ակտիվացնում է շարժառիթը, որոշարկում ու կոնկրետացնում նպատակը։ Նպատակի իրականացման առաջին աստիճանը պահանջվող արդյունքի նախագծումը, մոդելավորումն է, որը ներառում է նաև աշխատանքային պրոցեսի հաջորդականության նախատեսումը։ Աշխատանքային պրոցեսի այս տարրը, որը պայմանավորված է արտադրության կողմնորոշմամբ ու նպատակով, ըստ էության արդեն արտադրական գործունեություն է։ Այդ պատճառով էլ այն դրսևորվում է իբրև մարդկային աշխատանքը բնութագրող որոշիչ առանձնահատկություն։ Աշխատանքի պլանավորման ու մոդելավորման միջոցով իրականացվում են երկու ինքնուրույն, որակապես տարբեր ֆունկցիաներ. իրականության արտացոլման՝ աշխատանքին առնչվող իրերի, երևույթների, պրոցեսների ու դրանց կապակցությունների ճանաչման ֆունկցիա և ակտիվ՝ ստեղծագործական ֆունկցիա, որի արդյունքն անհրաժեշտ առարկայի իդեալական պատկերի ստեղծումն է։

2. Իդեալական նախագծի առարկայացման ֆունկցիա։ Վերջինս աշխատանքային պրոցեսի «ամենապատասխանատու» կողմն է։ Եթե մարդու գլխում եղած նախագծերն ու պլանները նյութական տեսակետից ոչինչ են, ապա առարկայացման պրոցեսում նրանք վերափոխվում են իրերի և կարող են բավարարել մարդկանց այս կամ այն պահանջմունքը։ Դրա հետ միասին առարկայացումը հնարավորություն է տալիս բացահայտելու նոր կապեր, ճշգրտելու և հարստացնելու մոդելը։ Նյութականացման կամ առարկայացման ֆունկցիան, որպես կանոն, չի կարող իրականացվել մեկ գործողությամբ։ Այն իր դրսևորման մեջ շատ ընդարձակ ու բազմակողմանի է և ենթադրում է միմյանց հետ կապված մի շարք ֆունկցիաներ։ Այնուամենայնիվ, այստեղ կարելի է առանձնացնել որոշ գլխավոր տարրեր. հում նյութի ձեռք բերում ու նախապատրաստում, արդյունքի առանձին մասերի պատրաստում ու մոնտաժում, աշխատանքային պրոցեսի հաջորդականության պահպանում, տեխնիկական միջոցների վերահսկում, կառավարում, էներգիայի և տրանսպորտային միջոցների ապահովում, աշխատանքի գործիքների վերանորոգում և այլն։

Բացի այս ընդհանուր ֆունկցիաներից, արտադրության պրոցեսում մարդն իրականացնում է նաև մի շարք այլ ֆունկցիաներ, որոնք բխում են այս կամ այն կոնկրետ աշխատանքի առանձնահատկություններից։ Նշված ֆունկցիաները վերաբերում են ինչպես արտադրական կոլեկտիվի, այնպես էլ առանձին մարդու կողմից իրականացվող ամբողջական աշխատանքին։ Այդ

նշանակում է, որ աշխատանքային պրոցեսի տարրերը չեն փոփոխվում, անկախ այն բանից, թե այդ աշխատանքի սուբյեկտն առանձին անձնավորություն է, թե՞ արտադրական կոլեկտիվը։

Փիլիսոփայական և տնտեսագիտական գրականության մեջ տարակարծություններ կան նաև արտադրության սուբյեկտիվ գործոնի կառուցվածքի մեկնաբանման կապակցությամբ։ Որոշ հետազոտողներ կարծում են, որ արտադրության սուբյեկտիվ գործոնի կառուցվածքը սահմանափակվում է միայն անմիջական արտադրության պրոցեսում զբաղված բանվորներով։ Նման պնդման հետ չի կարելի համաձայնել, մասնավորապես այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է մեքենական և, հատկապես, ավտոմատացված արտադրությանը։ Դեռևս Կ. Մարքսն է ապացուցել, որ խոշոր մեքենական արտադրության ժամանակ աշխատանքի բաժանումն ու կոոպերացումն առանձին աշխատողների միավորում է միասնական արտադրական օրգանիզմում, որի հետևանքով արդյունքը դադարում է առանձին մարդու աշխատանքի արդյունք լինելուց և հանդես է գալիս իբրև միասնական աշխատանքի արդյունք[8]։ Այս պատճառով էլ մեքենական արտադրությունն աննախընթաց մասշտաբներով զարգացնում է աշխատանքային պրոցեսի ինչպես առարկայական, այնպես էլ սուբյեկտիվ պայմանները։ Վերջինիս մեջ ամենից առաջ մտնում են գիտությունն ու նրա տեխնոլոգիական կիրառումը։ Ժամանակակից արտադրության պայմաններում մարդն իր և աշխատանքի առարկայի միջև տեղադրում է ոչ միայն աշխատանքի միջոցները, այլև բնության ճանաչված պրոցեսները, որոնք տվյալ պայմաններում վերածվում են արտադրության պրոցեսի գործոնների։ Կուսակցության XXVI համագումարին ՍՄԿԿ Կենտկոմի տված հաշվետու զեկուցման մեջ Լ. Ի. Բրեժնևն ընդգծեց, որ «արտադրության հետ գիտության սերտ ինտեգրացումը արդի դարաշրջանի հրամայական պահանջն է»[9]։ Արտադրության և գիտության միացման գործուն ձևերից մեկը ժամանակակից գիտաարտադրական միավորումներն են։ ՍՄԿԿ XXVI համագումարում նշվեց, որ այդ միավորումները պետք է դառնան «բարձրորակ նոր արտադրանքի ստեղծման ու թողարկման, արտադրության տեխնոլոգիայի ու կազմակերպման կատարելագործման խոշոր կենտրոն»[10]։ Այս պայմաններում իբրև արտադրության սուբյեկտիվ գործոն հանդես է գալիս միասնական արտադրական օրգանիզմը՝ ներառելով ինչպես բանվորներին, այնպես էլ արտադրության հետ կապված ինժեներատեխնիկական և գիտական անձնակազմը։ Հետևաբար, գիտությունն անմիջական արտադրողա-

---

[7] В. М. Москвич, Проблемы подготовки рабочих кадров, М., 1974, с. 7; В. П. Чемоданов, О некоторых вопросах усиления роли науки в строительстве коммунизма, Новосибирск, 1965, с. 21; М. М. Каров, Основные закономерности развития естествознания, Ростов-на-Дону, 1963, с. 297.

[8] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 340—341։

[9] Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, Երևան, 1981, էջ 77։

[10] Ն. Ա. Տիխոնով, ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալիստական զարգացման 1981—1985 թվականների և մինչև 1990 թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունները, Երևան, 1981, էջ 26։

կան ուժի վերածվելու հետ կապված՝ փոփոխվում և ընդլայնվում է արտադրության սուբյեկտիվ գործոնի հասկացությունը։

Անմիջական արտադրողական ուժի վերածվելու հնարավորություն ունեն ամենից առաջ, իհարկե, բնական և տեխնիկական գիտությունները։ Սակայն արտադրողական ուժի վերածման կողմեր ունեն նաև մի շարք հասարակական գիտություններ։ Ժամանակակից արտադրության գիտական պլանավորումը, կազմակերպումն ու վերահսկումն անհնարին է առանց տնտեսագիտության, ինժեներական հոգեբանության, էրգոնոմիկայի, տեխնիկական գեղագիտության, սոցիալական հոգեբանության և այլնի։ Նշված հասարակական գիտությունները կատարում են ոչ թե անմիջական արտադրողական ուժի ֆունկցիա, այսինքն՝ ոչ թե անմիջականորեն մարմնավորվում են արտադրողական ուժերի իրային տարրերի ձևով կամ էլ դառնում արտադրության պրոցեսում կիրառվող հմտություն ու գիտելիք, այլ կատարում են արտադրողական ուժերի, ինչպես նաև՝ արտադրական հարաբերությունների զարգացմանը սպասարկող ֆունկցիա։ Ուրեմն, այդ գիտություններն ու դրանցով զբաղված մարդիկ հանդես են գալիս ոչ թե իբրև անմիջական արտադրողական ուժ, ինչպես կարծում են որոշ հեղինակներ[11], այլ՝ միջնորդավորված արտադրողական ուժ, արտադրության միջնորդավորված սուբյեկտիվ գործոն։ Այս կատեգորիայի տակ պետք է մտցնել նաև մարդկանց այն խմբերը, որոնք արտադրության համար կադրեր են պատրաստում, ղեկավարում ու պլանավորում են այն և այլն։ Ջնայած միջնորդավորվածությանը, նշված մարդկանց գործունեությունն ուղղված է բնության վերափոխմանը։ Այդ միջնորդավորվածությունը բոլորովին չի խանգարում, որ արդյունքը դառնա մարդկանց համատեղ գործունեության արգասիք[12]։

Արտադրության ավտոմատացման հեռանկարն այն է, որ մարդու աշխատանքային գործունեությունն աստիճանաբար վերածվելու է գիտական գործունեության կամ իր դրսևորման ձևով մոտենալու է նրան։ Դա նշանակում է, որ գիտության ու տեխնիկայի զարգացման բազայի վրա աճում է նաև արտադրության միջնորդավորված սուբյեկտիվ գործոնի դերը՝ ինչպես հարաբերական, այնպես էլ բացարձակ իմաստով։ Ուրեմն՝ գոյություն ունի արտադրության սուբյեկտիվ գործոնի դրսևորման երկու ձև. 1. արտադրության անմիջական սուբյեկտիվ գործոն, երբ մարդն իր ֆիզիկական ու հոգևոր կարողություններն արտադրության իրային տարրերին անմիջականորեն միացնելով՝ ստեղծում է նյութական բարիքներ։ 2. Արտադրության միջնորդավորված սուբյեկտիվ գործոն, երբ մարդու ֆիզիկական ու հոգևոր կարողություններն անմիջականորեն չեն միանում արտադրության իրային տարրերին, բայց իրենց իրացման և դրսևորման մեջ ստեղծում են նյութական բարիքներ կամ նպաստում դրանց ստեղծմանը։

Արտադրության սուբյեկտիվ գործոնի կառուցվածքի բնութագրման հարցում մեկ ուրիշ ծայրահեղության մեջ են ընկնում Ի. Յաստրեմսկին և Գ. Վոլկովը։ Ի. Յաստրեմսկին պնդում է, որ իբրև արտադրողական ուժերի անձնա-

---

[11] В. И. Белозерцев и В. И. Шпензер, Социологические проблемы развития науки и техники («Философские науки», 1967, № 4, с. 169).

[12] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26, ч. I, с. 422.

կան տարր և, հետևաբար, իբրև արտադրության սուբյեկտիվ գործոն հանդես է գալիս ամբողջ հասարակությունը՝ որպես միասնական սուբյեկտ[13]։ Իրավացիորեն արտադրողական ուժերի կազմի մեջ մտցնելով գիտությունը և գիտությամբ ու արտադրության կազմակերպմամբ զբաղված մարդկանց, Գ. Վոլկովը միաժամանակ արտադրողական ուժերի անձնական տարրի մեջ փաստորեն մտցնում է հասարակության գրեթե ամբողջ չափահաս բնակչությանը՝ այդ թվում նաև կրթության, դաստիարակության, հոգևոր մշակույթի և այլ բնագավառներում զբաղված բոլոր աշխատողներին[14]։ Կ. Մարքսը նշել է, որ երբ մենք իբրև օբյեկտ դիտում ենք բնությունը, իբրև սուբյեկտ՝ ամբողջությամբ վերցրած հասարակությունը, այս իմաստով բնակչությունը հանդես է գալիս իբրև հասարակական արտադրության սուբյեկտ[15]։ Բայց հիշյալ հեղինակների մոտ հարցը քննվում է ոչ թե հասարակության և բնության, այլ հասարակական արտադրողական ուժերի իրային և անձնական տարրերի փոխհարաբերության առումով։ Իսկ այս հարաբերության մեջ ամբողջ հասարակությանը կամ հասարակության ամբողջ չափահաս բնակչությանն իբրև արտադրության սուբյեկտ դիտելու դեպքում կատեգորիան կորցնում է իր յուրահատկությունը, քանի որ չկա և չի կարող լինել հասարակություն առանց արտադրողական ուժերի իրային և անձնական տարրերի միասնության։ Հետևաբար, հասարակությունն ինքն իր նկատմամբ չի կարող դառնալ սուբյեկտ։ Երբեք հասարակության ամբողջ չափահաս բնակչությունը նյութական արտադրությանը չի մասնակցել և չի էլ կարող մասնակցել (եթե նկատի չունենանք նախնադարյան հասարակարգի վաղ շրջանը)։ Բացի կենսական բարիքների արտադրության անհրաժեշտությունից, հասարակությունն ունի նաև հոգեկան արժեքների պահանջմունք, երկրի պաշտպանության, մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության, բնակչության սպասարկման և այլ կարգի աշխատանքների անհրաժեշտություն։ Շահագործողական հասարակարգերին հատուկ մի շարք դասակարգեր ու խավեր ընդհանրապես արտադրությանը չեն մասնակցում։ Հետևաբար, արտադրության սուբյեկտիվ գործոնը պատմականորեն կոնկրետ բնույթ ունի, այսինքն՝ արտադրողական ուժերի զարգացման տարբեր աստիճաններում ու տնտեսական կացութաձևերում նրա կառուցվածքն ու անմիջական արտադրական ֆունկցիաներն այլ են։ Միշտ պետք է նկատի ունենալ որոշակի կոնկրետ արտադրություն, իսկ վերջինիս կառուցվածքում՝ որոշակի իրային և անձնական տարրեր։

Կ. Մարքսը պատմականորեն ձևավորված տնտեսական կացութաձևերի տարբերիչ առանձնահատկություններից հիմնականը համարում էր այն, թե մարդիկ ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով են նյութական բարիքներ արտադրում[16]։ Ընդ որում, այստեղ բացառիկ նշանակություն ունեն այն առանձնահատուկ ձևն ու եղանակը, որոնցով իրականացվում է արտադրության իրային և անձնական գործոնների միացումը։ Վերջինս ունի երկու կողմ՝ սոցիալական և տեխնոլոգիական։ Արտադրության միջոցների նկատմամբ սեփականության

---

13 «Некоторые вопросы исторического материализма», с. 50.

14 Г. Н. Волков, Социология науки, М., 1968, с. 162, 178—179.

15 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 12, с. 711, 726; т. 26, ч. I, с. 150.

16 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 191։

տիրապետող ձևով և դրանով պայմանավորված՝ արտադրության իրային և անձնական տարրերի միացման սոցիալական եղանակով է որոշվում այն հարցը, թե ո՞վ է արտադրության իրային տարրերը շարժման մեջ դնող և արտադրություն իրականացնող մարդը. ստրո՞ւկը, ճո՞րտը, պրոլետա՞րը, թե շահագործումից ազատ աշխատավորը։ Սեփականության ձևը որոշում է նաև արտադրողի՝ արտադրության միջոցների հետ ունեցած կապի բնույթը։

Արտադրության սուբյեկտիվ գործոնի բնույթը որոշող կարևոր միջոց են նաև արտադրողական ուժերի իրային և անձնական տարրերի միացման տեխնոլոգիական եղանակը և աշխատանքի միջոցների զարգացման մակարդակը, քանի որ ամենից առաջ դրանցով են պայմանավորված մարդու անմիջական արտադրական ֆունկցիաները. կիրառվող ֆիզիկական ու մտավոր աշխատանքի ծավալն ու համամասնությունը, դրանց իրացման ձևերը և այլն։

Կ. Մարքսը նշել է, որ նախնադարյան հասարակարգում իրականացվող աշխատանքը կրում է սինթետիկ բնույթ[17]։ Դա նշանակում է, որ նախնադարյան համայնական սեփականությունը, աշխատանքի պարզունակ բնույթն ու ցածր արտադրողականությունը դեռևս հնարավորություն չեն տալիս գործունեության այս կամ այն ոլորտը, աշխատանքային այս կամ այն ֆունկցիան առանձնացնել և դարձնել հիմնական, գերիշխող։ Համայնքի յուրաքանչյուր աշխատունակ անդամ իր ֆիզիկական ու մտավոր կարողություններով կարող էր ընդգրկել պարզունակ աշխատանքային պրոցեսի բոլոր տարրերը։ Մարդն ինքն էլ դեռևս տեխնոլոգիապես կապված չէր աշխատանքի որոշակի ու կոնկրետ ձևի հետ։ Սոցիալական ու մասնագիտական տարբերությունների բացակայությունը համայնքը դարձնում էր միասեռ արտադրական օրգանիզմ։ Այդ պատճառով էլ ինքը՝ համայնքը հանդիսանում էր առաջին և մեծագույն արտադրողական ուժը[18] և որպես այդպիսին՝ արտադրության միասնական սուբյեկտիվ գործոնը։

Աշխատանքի նախնադարյան կոոպերացիային փոխարինելու է գալիս տնային ստրկությունը։ Թվում է, թե այս փուլում դեռևս պահպանվում է աշխատանքային պրոցեսի պարզունակ ամբողջականությունը։ Բայց քանի որ ստրուկն իր աշխատանքով բավարարում է ուրիշի պահանջմունքը, այդ պատճառով էլ նրա աշխատանքը զրկվում է ներքին շահագրգռվածությունից ու նպատակադրումից։ Այստեղից սկսվում է նաև ֆիզիկական ու մտավոր աշխատանքի բաժանումը, որոնք արդեն ոչ թե լրացնում են միմյանց, այլ՝ անջատվում և հետագայում թշնամական հակադրության են հասնում։ Ստրուկների քանակական աճը հնարավորություն է տալիս շարժման մեջ դնել աշխատանքի ավելի հզոր միջոցներ։ Ծնվում է աշխատանքի ստրկատիրական կոոպերացիան։ Աշխատանքի կազմակերպման նախորդ ձևերին հատուկ ազատությունն այժմ վերածվում է նեղ մասնագիտացված ու խիստ սահմանափակ արտադրական ունակությունների տեր մարդկանց ռիթմիկ, միօրինակ ֆիզիկական աշխատանքի։ Այս դեպքում ստրուկի աշխատանքը զրկվում է ոչ միայն շարժառիթից ու նպատակադրումից, այլև պահանջվող արդյունքի իդեալական մոդելավորման ֆունկցիայից։ Աշխատանքի կոոպերացման այս

---

17 Կ. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 24, с. 43—44.
18 Կ. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 46, ч. I, с. 485.

աստիճանում իրենց սոցիալական վիճակով ու արտադրության պրոցեսում ունեցած դերով, իրոք որ, ստրուկները դառնում են «խոսող գործիքներ»։

Չնայած կոպիտ ու հարկադրական բնույթին, աշխատանքի ստրկատիրական կոոպերացիան ունեցավ իր առաջադիմական նշանակությունը։ Նախնադարին հատուկ պարզունակ—ամբողջական աշխատանքի քայքայումը մեծապես խթանեց արտադրողական ուժերի զարգացումը։ Խորացան ու բազմաբնույթ դարձան նաև մարդկանց կապերն ու հարաբերությունները, ստեղծվեցին հարուստ հոգևոր արժեքներ։ Այս ամենը, մյուս կողմից, նպաստում է ստրկատիրական հասարակարգի քայքայմանը և արտադրության իրային և անձնական տարրերի միացման ավատական եղանակի առաջացմանը, որի հիմքը կազմում են հողի մասնավոր սեփականությունն ու անձնական կախման հարաբերությունները։ «Սեփականության այս ձևի պայմաններում հանրության անդամը որպես այդպիսին ընդհանուր սեփականության տիրակից չէ»[19],— գրել է Կ. Մարքսը։ Անհատի և հասարակության կապն այստեղ միջնորդավորված է արտադրության միջոցներով, որի հետևանքով հանրությունը հանդես է գալիս իբրև մասնավոր սեփականատերերի և սեփականազուրկների միասնություն։ Հենց դա էլ ավատատիրությանը հատուկ տնտեսական ու արտատնտեսական կախման հիմքն է։

Միջնադարյան գյուղացու և ցեխային արհեստավորի աշխատանքը բնութագրող կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ արդյունքի ստեղծման հետ կապված՝ բոլոր կամ համարյա բոլոր աշխատանքային ֆունկցիաները կատարում է նույն մարդը, քանի որ աշխատանքը դեռևս անհատական է։ Նույնիսկ «քաղաքներում առանձին համքարությունների միջև աշխատանքի բաժանումը դեռևս շատ պարզունակ է, իսկ բուն համքարությունների ներսում, առանձին աշխատողների միջև, ամենևին չի եղել։ Ամեն մի աշխատող պետք է իմանա մի ամբողջ շարք աշխատանքներ, պետք է կարողանա անել ամեն բան, ինչ հնարավոր է անել իր գործիքների օգնությամբ»[20]։ Ե. Սուիմենկոն կարծում է, որ աշխատանքի բազմակողմանիությունը միջնադարյան հողագործին և արհեստավորին հնարավորություն էր տալիս բազմակողմանիորեն դրսևորել իրենց կարողությունները[21]։ Այսպիսի պատկերացման դեպքում անտեսվում է այն կարևոր իրողությունը, որ այդ բազմակողմանիությունը պարզունակ ու մակերեսային էր։ Այն սահմանափակվում էր գլխավորապես սեփական տնտեսության կարիքները հոգալու ոլորտով։

Ավատական հասարակարգին հատուկ որոշ դասակարգեր ու խավեր (ճորտատերերը, հոգևորականները և այլն) նյութական արտադրությանը չեն մասնակցում ո՛չ անմիջականորեն, ո՛չ միջնորդավորված ձևով։ Հետևաբար, այդ դասակարգերի ու խավերի ներկայացուցիչները չեն մտնում արտադրության սուբյեկտիվ գործոնի կառուցվածքի մեջ։ Արտադրության ավատական եղանակը նշանակալի փոփոխություն չմտցրեց նաև գիտության և արտադրության կապի մեջ։ Ավելին, «Միջնադարը զարգանում էր բացառապես պար-

---

19 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 46, ч. I, с. 468.

20 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 3, с. 52.

21 Е. И. Суименко, Структура процесса труда и прогресс его исторических форм («Коммунизм и общественный прогресс», Днепропетровск, 1967, с. 43).

ղունակ հիմքերի վրա»[22]։ Ժամանակաշրջանին հատուկ՝ դեռևս չհամակարգված գիտական գիտելիքներն արտադրության ինքնուրույն գործոն չեն և որպես այդպիսին արտադրողական ուժերի կառուցվածքի մեջ չեն մտնում։

Կապիտալիզմը նախորդ տնտեսական ֆորմացիաներին հատուկ շահագործման կոպիտ, արտատնտեսական ձևերը փոխարինում է «բարեկիրթ», զուտ տնտեսական ձևով։ Կապիտալիստական արտադրաեղանակը նախորդ պատմական ձևերի համեմատությամբ մեծապես խթանում է նաև արտադրողական ուժերի, մասնավորապես, տեխնիկայի զարգացմանը։ Վերջինս հանգեցնում է նրան, որ աշխատանքային առանձին օպերացիաներ կատարվում են մասնագիտացված մեքենաների միջոցով։ Այդպիսի մեքենաները Կ. Մարքսը համարում է «մասնական մեքենաներ», իսկ նրանց հետ աշխատող, արտադրական որոշակի նեղ ֆունկցիայի մեջ մասնագիտացված և անընդհատ միևնույն գործողությունը կատարող բանվորին՝ «մասնագործ բանվոր»[23]։ Խոշոր արդյունաբերությունը «գիտությունը որպես արտադրության ինքնուրույն պոտենցիա, զատում է աշխատանքից և նրան ստիպում ծառայելու կապիտալին»[24]։ Մտավոր և ֆիզիկական աշխատանքի այսպիսի խորը բաժանման և դրանց հակադրման հետևանքով աշխատանքի կազմակերպումն ու կառավարումն անցնում է հատուկ կազմակերպված սոցիալական խավի՝ ինժեներատեխնիկական մտավորականության ձեռքը։ Կապիտալիզմի պայմաններում ինժեներատեխնիկական անձնակազմի աշխատանքը ոչ միայն արտադրության մտավոր կողմն է, այլև՝ արտադրողական աշխատանքի հարաբերականորեն ինքնուրույն բնագավառ։ Այդ նշանակում է, որ ինժեներատեխնիկական անձնակազմը ևս մտնում է արտադրության սուբյեկտիվ գործոնի կառուցվածքի մեջ։

Կապիտալիզմի պայմաններում արտադրողական ուժերի զարգացմանը մեծապես նպաստում է նաև արտադրական հարաբերությունները կրող դասակարգի շահագրգռվածությունն ու հետաքրքրությունն աշխատանքի և նրա արդյունքների նկատմամբ։ «Բուրժուազիան,— գրել են Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը,— իր դասակարգային տիրապետության ավելի պակաս քան հարյուր տարվա ընթացքում ավելի բազմաթիվ և ավելի վիթխարի արտադրողական ուժեր է ստեղծել, քան նախորդ բոլոր սերունդները միասին վերցրած»[25]։

Սոցիալիզմն արմատապես վերափոխում է արտադրողական ուժերի իրային և անձնական տարրերի միացման սոցիալական եղանակը։ Այն մեկընդմիշտ վերջ է տալիս արտադրության պրոցեսում ենթարկման ու տիրապետման հարաբերություններին, մարդու կողմից մարդու շահագործմանը, մեքենաների կապիտալիստական կիրառմանը, աշխատանքի օտարմանը։ Արտադրության միջոցների նկատմամբ հանրային սեփականության ու աշխատանքի անմիջական հասարակական բնույթի շնորհիվ այստեղ մասնական

---

22 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 7, с. 360.

23 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 443, 444։

24 Նույն տեղում, էջ 381։

25 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Կոմունիստական կուսակցության մանիֆեստը, Երևան, 1968, էջ 75։

աշխատանքին միանում է աշխատանքի և նրա արդյունքի նկատմամբ աշխատողի բազմակողմանի (կոլեկտիվ, անձնական, նյութական, բարոյական) շահագրգռվածությունը։ «Ուրիշի համար հարյուրամյակներ աշխատելուց, շահագործողների համար հարկադրական աշխատանք կատարելուց հետո, առաջին անգամն է հնարավորություն ստեղծվում իր համար աշխատելու, այն էլ այնպիսի աշխատանքի հնարավորություն, որը հենվում է նորագույն տեխնիկայի ու կուլտուրայի բոլոր նվաճումների վրա»[26]։

Կապիտալիստական արտադրությանը հատուկ մասնական աշխատանքը սոցիալիզմը հաղթահարում է երկու հիմնական միջոցներով. արտադրության միջոցների հանրային սեփականության հաստատման ու զարգացման և արտադրության սոցիալիստական կազմակերպման միջոցով։ Սոցիալիստական պետությունը պլանավորում, կարգավորում ու հասարակական պահանջմունքներին համապատասխան ուղղություն է տալիս արտադրողական ուժերի զարգացմանը։

Նկատելով վերոհիշյալից, արտադրության սուբյեկտիվ գործոնը կարելի է սահմանել հետևյալ կերպ. արտադրության սուբյեկտիվ գործոնը պատմականորեն ձևավորված որոշակի արտադրության եղանակով պայմանավորված սոցիալական վիճակ ունեցող, համապատասխան գիտելիքներով, արտադրական փորձով ու աշխատանքային հմտությամբ զինված մարդը կամ մարդկանց խումբն է, ինչպես նաև այն գիտությունները, որոնք անմիջականորեն կամ միջնորդավորված ձևով մասնակցում են նյութական բարիքների արտադրությանը։

К ВОПРОСУ ХАРАКТЕРИСТИКИ СУБЪЕКТИВНОГО ФАКТОРА ПРОИЗВОДСТВА

МАНВЕЛ АРУТЮНЯН

Резюме

В структуре производительных сил роль человека является определяющей. Только при целенаправленной деятельности человека природные силы становятся социальными, то есть производительными силами. Это означает, что человек является не только главным компонентом производительных сил, но и субъективным фактором производства. При этом часть людей участвует в производстве непосредственно, а часть—опосредствованно. В антагонистических обществах некоторые классы и сословия вообще не участвуют в материальном производстве. В различные общественно-экономические формации субъективный фактор производства имеет различное содержание и структуру.

---

26 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 495։